Ալեքսանդր Շիրվանզադե

Հայրն ու որդին

Սիմոնը չքավոր էր և չգիտեր, որ չքավորությունն ամոթալի բան չէ: Բայց գիտեր նաև, որ եթե մարդ չաշխատի նրա լուծը տանել պատվով, կտրող է դառնալ ամոթալի:

Արհեստով Սիմոնը գրաշար էր և իհարկե, ստիպված էր կարդալ այն բոլորը, ինչ որ շարում էր: Տպարանատերը լուրջ գրքերն ու գրքույկները նրան էր տալիս շարելու, որովհետև նրան էր համարում ամենից գրագետ և ամենից բարեխիղճ:

Քսան ու մեկ տարվա ընթացքում Սիմոնը կարդացել էր բավականաչափ խելոք բաներ և շատ էր մտածել: Նա բոլոր հեղինակներին հավասար հարգանքով չէր վերաբերվում: Իր տեսակի քննադատ էր: Առանձնապես խստապահանջ էր բարոյախոսների վերաբերմամբ: Նրա համոզմունքով գրողն ինքը նախ և առաջ պիտի լինի այն, ինչ որ պահանջում է ուրիշներից: Այլապես գրողն արժեք չուներ նրա աչքում: Չսիրած հեղինակների գործերը շարելիս՝ Սիմոնի նեղ, նիհար ու պղնձագույն դեմքի վրա շարունակ խաղում էր մի հեգնական ժպիտ, նա իր մտքում ասում էր .

— Ստի՛ր, ստի՛ր, բարեկամ, բայց քեզ լավ եմ ճանաչում:

Մի անգամ նա, ընդհարվելով մի ինչ որ խմբագրի հետ, ասաց.
— Եթե դուք լավ մարդ լինեիք, այդքան չէիք շողոքորթի մեծամեծերին:

Վիրավորված խմբագիրը պահանջեց, որ Սիմոնը վռնդվի տպարանից: Տպարանատերը չհամաձայնվեց, ասելով.

— Ես չեմ կարող ինձ զրկել Սիմոնին պես մի լավ բանվորից: Նա իմ տպարանի աչքն է:

Ընկերները հարգում էին Սիմոնին և իրարու հետ ընդհարվելիս միշտ նրան էին դատավոր կանչում: Ոմանք իրենց հոգու խորքում վախենում էին նրանից:

Սիմոնը բարեսիրտ էր, բայց խստապահանջ՝ մարդկային արարքների վերաբերմամբ: Ատում էր ամբողջ հոգով բոլոր անարդարությունները, խոշորներից սկսյալ մինչև ամենափոքրերը: Ուղղամիտ և արդարադատ էր: Անողոք էր, երբ հարկավոր էր պարսավել, անսահման ներողամիտ՝ երբ վիրավորում էին նրան: Հարգելով զորեղներին, չէր թեքվում նրանց առջև: Պաշտպանելով թույլերին, երբեք կողմնապահ չէր նրանց օգտի համար:

Փիլիսոփա չէր Սիմոնը, բայց գիտեր արհամարհել կյանքի դառնությունները: Ընտանեկան լուծը տանում էր անտրտունջ, թեև ծանր էր շաբաթական մի քանի տասնյակ ռուբլիներով կերակրել վեց բերան:

Նրա չորս զավակներից ամենամեծը տասնուհինգ տարեկան Վահանն էր՝ աշակերտ Ներսիսյան դպրոցի: Մնացյալները 3, 5 և 9 տարեկան աղջիկներ էին: Վաղ առավոտից մինչև ուշ երեկո նրա կինը աշխատում էր անընդհատ և հազիվ հազ կարողանում էր քիչ թե շատ կար, ու կարգ ու կանոն ու մաքրություն, պահպանել իր աղքատիկ տնտեսության մեջ: Իր բնույթով ու կենսական պահանջներով Շողիկը Սիմոնի հակապատկերն էր: Անիծում էր իր ճակատագիրը առավոտից մինչև երեկո և կծու խոսքերով հանդիմանում Սիմոնին նրա աղքատության համար: Նա քահանայի աղջիկ էր: Նա շարունակ կրկնում էր.

— Եթե հայրս գիտենար, որ դու ինձ այդպես ես պահելու, քեզի կտա՞ր իր աղջիկը:

Մոռանում էր, որ տեր Մեսրովբը շատ լավ գիտեր գրաշարի նյութական վիճակը: Մոռանում էր նաև իր անհրապույր արտաքինը, որ չէր կարող գրավել Սիմոնից մի աստիճան ավելի խստապահանջ մեկին:

Կնոջ անվերջ կշտամբանքներից ձանձրացած գրաշարը նայում էր իր կինամոնագույն խոշոր ու խելացի աչքերով կարճահասակ, կարճավիզ կոշտ ու կոպիտ կողակցին և զարմանում էր, թե նրա ինչովը հրապուրվեց: Բայց նա այնքան նրբազգաց էր, որ երբեք Շողիկի երեսովը չէր տալիս նրա տգեղությունը: Չէր էլ վիճում նրա հետ, զգալով, որ չունե
բավականաչափ զորեղ հիմք՝ աղքատությունը պաշտպանելու համար: Միայն կրկնում էր.

Դու ինձնից ազնվություն պահանջիր և ոչ հարստություն:

Շողիկն ամեն անգամ կծու հեգնանքով ժպտում էր, այդ դարձվածքը լսելիս: Մի անգամ այնպես կատաղեց, որ ասաց.

Մի զույգ կոշիկներ երեխայիս համար ավելի թանկ արժե իմ աչքում, քան քո ազնվությունը:

Սիմոնը մի հոգս և մի փափագ միայն ուներ՝ ինչպես և է տալ Վահանին բարձր ուսում: Իր լավագույն հույսերը նրա վրա էր դրել: Էհ, մինչև այժմ մի կերպ ապրել են, էլի կապրեն մի քանի տարի: Ահա Վահանն արդեն հինգերորդ դասարանումն է, երկու տարուց հետո նա կլինի համալսարանում և մեկ էլ տեսար մի օր ավարտեց ու եկավ բժիշկ կամ իրավաբան՝ միևնույն է: Այն ժամանակ նա կխոսե Շողիկի հետ:

Մինչև նրա գալը ես կգնամ մյուս աշխարհը,— ասում էր անհաշտ կինը և շարունակում էր կրծոտել Սիմոնի համբերությունը:

Վերջին ժամանակ Սիմոնը շատ անհանգիստ էր: Բանն այն է, որ Վահանը ծուլացել էր, առաջվա սիրով չէր հետևում իր դասերին: Արդեն երկու անգամ Սիմոնին կանչել էին դպրոց և այդ մասին հայտնել:

Սիմոնը սովոր չէր իր զավակներին ծեծով կրթելու: Նա գիտեր, որ ծեծն առհասարակ խրատելու ու կրթելու միջոց չէ: Նա միշտ հիշում էր մի գրքույկում կարդացածը, թե Զվիցերիայում կենդանիներին անգամ չեն ծեծում:

Երեխաներին պիտի սովորեցնել հարգել ու սիրել ծնողներին և ոչ թե վախենալ նրանցից,— ասում էր նա հաճախ Շողիկին, որ այս դեպքում ևս համաձայն չէր նրա հետ և մեկ-մեկ ծվծվացնում էր իր փոքրիկներին:

Եվ նա ինքն աշխատում էր խոսքով ուղղել Վահանին: Սակայն երբեմն չէր կարողանում կատաղությունը զսպել և իր խրատները ավարտում էր սպառնալիքով:

Եթե քեզ դպրոցից դուրս անեն, քեզ կսպանեմ:

Վահանը, որ արտաքուստ իր մոր պատճենն էր իր լայն երեսով, նեղ ճակատով, տափակ քթով ու իրարից շատ հեռու տեղավորված աչքերով, լսում էր նրան լուռ, գլուխը կրծքին թեքած: Նա միանգամայն հանգիստ էր, որ Սիմոնը երբեք ձեռ չի բարձրացնի որդու վրա: Քի՞չ կան փողոցում թափառող ծույլ տղաներ, որոնց զրկել են ուսումից. ո՞ր մեկն է սպանվել դրա պատճառով: Բայց Վահանը բացի ծույլ լինելուց՝ և անհանգիստ էր ու չար: Ինքը դասերը չպատրաստելով, խանգարում էր և ընկերներին:
բավականաչափ զորեղ հիմք՝ աղքատությունը պաշտպանելու համար: Միայն կրկնում էր.

Դու ինձնից ազնվություն պահանջիր և ոչ հարստություն:

Շողիկն ամեն անգամ կծու հեգնանքով ժպտում էր, այդ դարձվածքը լսելիս: Մի անգամ այնպես կատաղեց, որ ասաց.

Մի զույգ կոշիկներ երեխայիս համար ավելի թանկ արժե իմ աչքում, քան քո ազնվությունը:

Սիմոնը մի հոգս և մի փափագ միայն ուներ՝ ինչպես և է տալ Վահանին բարձր ուսում: Իր լավագույն հույսերը նրա վրա էր դրել: Էհ, մինչև այժմ մի կերպ ապրել են, էլի կապրեն մի քանի տարի: Ահա Վահանն արդեն հինգերորդ դասարանումն է, երկու տարուց հետո նա կլինի համալսարանում և մեկ էլ տեսար մի օր ավարտեց ու եկավ բժիշկ կամ իրավաբան՝ միևնույն է: Այն ժամանակ նա կխոսե Շողիկի հետ:

Մինչև նրա գալը ես կգնամ մյուս աշխարհը,— ասում էր անհաշտ կինը և շարունակում էր կրծոտել Սիմոնի համբերությունը:

Վերջին ժամանակ Սիմոնը շատ անհանգիստ էր: Բանն այն է, որ Վահանը ծուլացել էր, առաջվա սիրով չէր հետևում իր դասերին: Արդեն երկու անգամ Սիմոնին կանչել էին դպրոց և այդ մասին հայտնել:

Սիմոնը սովոր չէր իր զավակներին ծեծով կրթելու: Նա գիտեր, որ ծեծն առհասարակ խրատելու ու կրթելու միջոց չէ: Նա միշտ հիշում էր մի գրքույկում կարդացածը, թե Զվիցերիայում կենդանիներին անգամ չեն ծեծում:

Երեխաներին պիտի սովորեցնել հարգել ու սիրել ծնողներին և ոչ թե վախենալ նրանցից,— ասում էր նա հաճախ Շողիկին, որ այս դեպքում ևս համաձայն չէր նրա հետ և մեկ-մեկ ծվծվացնում էր իր փոքրիկներին:

Եվ նա ինքն աշխատում էր խոսքով ուղղել Վահանին: Սակայն երբեմն չէր կարողանում կատաղությունը զսպել և իր խրատները ավարտում էր սպառնալիքով:

Եթե քեզ դպրոցից դուրս անեն, քեզ կսպանեմ:

Վահանը, որ արտաքուստ իր մոր պատճենն էր իր լայն երեսով, նեղ ճակատով, տափակ քթով ու իրարից շատ հեռու տեղավորված աչքերով, լսում էր նրան լուռ, գլուխը կրծքին թեքած: Նա միանգամայն հանգիստ էր, որ Սիմոնը երբեք ձեռ չի բարձրացնի որդու վրա: Քի՞չ կան փողոցում թափառող ծույլ տղաներ, որոնց զրկել են ուսումից. ո՞ր մեկն է սպանվել դրա պատճառով: Բայց Վահանը բացի ծույլ լինելուց՝ և անհանգիստ էր ու չար: Ինքը դասերը չպատրաստելով, խանգարում էր և ընկերներին:
Երկրորդ անդամ Սիմոնը դպրոց կանչվելով, մանկավարժական խորհրդից լսել էր հետևյալ սպառնալիքը.

— Եթե դուք չուղղեք ձեր որդուն, ստիպված կլինենք նրան արձակել: Այդ տեսակ աշակերտները դպրոցի չարիքն են:

Մի երեկո, տպարանից տուն գնալով, լսեց որ դարձյալ իրեն դպրոց են կանչել:

— Սիրտս վկայում է,— ասաց նա Շողիկին, որ այս անգամ այդ անպիտանին դուրս են անելու դպրոցից:

— Քանդվի նրանց դպրոցն ու իրենք էլ գետինը մտնեն,— գոչեց Շողիկը:— Շատ են փքվում իրենց տված ուսումով:

Երբ Վահանն երևաց, Սիմոնը այնպիսի երկարատև ու խորը թափանցող մի հայացք ձգեց նրա վրա, որից մի ուրիշ գավակ կդողար: Բայց Վահանի անտարբեր ու բրութ դեմքի մի մկանն էլ չշարժվեց: Միայն նրա աչքերի բիբերը ծռվեցին մի կողմը և սպիտակուցները պսպղացին շիկացրած երկաթի պեծերի պես: Հայրն էր, որ սարսափեց որդու աչքերից: Այդ աչքերը լավ բան չէին խոստանում նրան:

Հետևյալ առավոտ Սիմոնը բանվորական կապույտ շապիկի փոխարեն հագավ իր տոնային հագուստը օսլայած շապիկով և գնաց դպրոց, կանխապես մտներով տպարան և տիրոջից մի ժամվա արձակուրդ խնդրելով: Նրա սիրտն ուժգին բաբախում էր ամոթի զգցմունքից: Ի՞նչ պատասխան պիտի տա նա մանկավարժներին, ինչո՞վ պիտի պաշտպանե ու արդարացնե իրեն ու իր որդուն:

Նա ստիպված եղավ սպասել գրեթե մի ամբողջ ժամ, որովհետև առաջին դասը նոր էր սկսվել, երբ նա մտավ դպրոց:

Վերջապես, լսվեց զանգակի ձայնը: Աակերտները աղմուկով դուրս թափվեցին բոլոր դասարաններից միաժամանակ, ինչպես մեղուները փեթակից և դպրոցի բակը լցրին աղմուկով: Սիմոնն աչքերով փնտրեց Վահանին ու չգտավ: Այս հանգամանքն ավելի սաստկացրեց նրա անհանգստությունը: Նա սկսեց ամաչել աշակերտներից անգամ: Նրան թվաց, որ յուրաքանչյուր պատանի մտքում ծաղրում է ու խղճում իրեն"

Նրան կանչեցին ուսուցչական սենյակը:

Այստեղ կանաչ մահուդով ծածկված երկայն սեղանի քով նստած էին միայն տեսուչն ու մի վերակացու: Սիմոնը ներս մտավ անվստահ քայլերով, խոնարհ գլուխ տվեց ու կանգնեց դռների առջև:

— Առաջ եկեք,— հրավիրեց տեսուչը, մի չափազանց նիհար մարդ կարճլիկ ալեխառն մորուքով:
Նրա ձայնը Սիմոնին թվաց չարագուշակ, և նայելով կնճռոտված ճակատին, զգաց որ այս անգամ լսելու է ավելի վատ բան:

Նա չէր սխալվում:

— Պարոն Մուրադյան,— արտասանեց տեսուչը չոր ու կտրուկ ձայնով, մանկավարժական խորհուրդը որոշել է ձեր որդուն արձակել դպրոցից: Ցավում ենք, իհարկե, բայց այլևս չենք կարող նրան պահել:

Հարվածը զորեղ էր, բայց Սիմոնը արդեն պատրաստվել էր նրան ընդունելու: Նա չէր գուշակում, որ իրեն սպասում է մի ուրիշ ավելի զորեղ հարված:

— Ծուլության ու չարության պատճառո՞վ եք արձակում իմ որդուն,— հարցրեց նա հազիվ լսելի ձայնով:

Տեսչի դեմքով սահեց մի հեգնական ժպիտ:

— Դժբախտաբար,— ասաց նա ճակատը շփելով,— ձեր որդու ախտը միայն ծուլությունն ու չարությունը չեն:

— Հապա՞:

— Նա գող է:

Սիմոնը ցնցվեց, մի քայլ ետ կանգնեց և գլուխը հպարտ բարձրացնելով, արտասանեց.

— Պարոն տեսուչ ես ձեզ խնդրում եմ չանարգել իմ որդուն:

— Պարոն Մուրադյան, ձեր որդին գող է,— կրկնեց տեսուչը յուրաքանչյուր բառ առանձին շեշտելով: Մենք նրա մասին կասկածներ ունեինք դեռ անցյալ տարի, հիմնվելով մի քանի աշակերտների գանգատների վրա: Բայց չեինք կարող առանց ապացույցների հավատալ, որ Ձեզ նման մի ազնիվ մարդու որդին կարող

է այդպիսի ախտ ունենալ: Դժբախտաբար այսօր մեր ձեռքում կան անհերքելի փաստեր, ուստի որոշեցինք դպրոցն ազատել մի ախտավորից:

— Բայց ի՞նչ է գողացել իմ որդին և ո՞ւմից է գողացել,— հարցրեց Սիմոնը:

— Պարոն Զանամյանց,— դարձավ տեսուչը վերակացուին,— կարդացեք ձեր կազմած «ցուցակ-հանցանքը»:

Վերակացուն, որ մի ակնոցավոր ծերունի էր, վերցրեց իր առջև դրած թուղթն ու կարդաց: Ապացուցված էին ու վկաներով հաստատված ինը դեպքեր գողության, որոնցից ամենափոքրն էր մի ռուբլի, ամենամեծ մի արծաթյա ժամացույց՝ վերջին դասարանի մի աշակերտից: Յուրաքանչյուրը մուրճի մի-մի հարված էին Սիմոնի համար:

Նա լսում էր գլուխը կրծքին թեքած, շունչը զսպած, ոտքից մինչև գլուխ դողալով: Երբ վերակացուն ավարտեց, Սիմոնը հարցրեց.

— Այդ գործողությունները խոստովանե՞լ է իմ որդին:

— Մի քանիսը, այո,— պատասխանեց վերակացուն:

— Գողացած իրերից կամ փողերից ոչի՞նչ չի վերադարձրել:

— Բացի մի զմելիից ոչինչ չի վերադարձրել:

— Ո՞րքան է ձեր կարծիքով գողացած փողերի գումարը: Ժամացույցն էլ հաշվեցեք:

— Փողերի գումարն է վաթսունհինգ ռուբլի, իսկ ժամացույցն արժեր ոչ պակաս, քան տասնհինգ ռուբլի:

Սիմոնը քրքրեց իր գրպանները: Գտավ ընդամենը տասնմեկ ռուբլի: Դողդողուն ձեռքով դնելով այդ գումարը սեղանի վրա, նա ասաց.

— Մնացյալը թույլ տվեք բերել հետո: Ասաց և առանց մի խոսք ավելացնելու, գլուխ տվեց ու դուրս եկավ:

— Խեղճ մարդ, ինչպե՞ս ազդվեց, ասաց տեսուչը:

Սիմոնը գնում էր տուն, ճանապարհին նա հիշեց տպարանը և մտնելով այնտեղ հայտնեց տիրոջը, որ այդ օրը չի կարող աշխատել:

— Ի՞նչ է պատահել, դու դողում ես,— հարցրեց տպարանատերը զարմացած:

— Ոչինչ,— ասաց Սիմոնը ու հեռացավ:

Երկինք և երկիր մթագնել էին Սիմոնի աչքերում: Ամոթի ու խայտառակության զգացումն էր պաշարել նրան, նրա որդին գո՞ղ: Մի՞թե աստված կարող է լինել այդչափ դաժան: Ինչո՞ւ, ի՞նչ մեղքերի համար: Մի՞թե նա չէ, որ իր շրջանում ամենից կատաղի է բողոքել մարդկային այլանդակ արարքների դեմ:

— Գո՛ղ, իմ որդին, գո՛ղ,— կրկնում էին նրա վրա բորբոքված շրթունքներն երբեմն այնքան լսելի ձայնով, որ անցորդները կանգ էին առնում և նայում նրա ետևից:

Գող՝ Սիմոն Մուրադյանի հարազատ զավա՞կը: Այլևս ի՞նչ երեսով նա պիտի երևա իր ընկերներին ու ծանոթներին: Ի՞նչ պիտի մտածեն նրանք: Չէ՞ որ որքան աշխատե թաքցնել իր խայտառակությունը, վերջ ի վերջո ամենքը գիտենալու են: Մի՞թե կա հնար զսպել հարյուրավոր աշակերտների բերանները: Մի՞թե յուրաքանչյուրը նրանցից հենց այսօր ևեթ չի պատմելու իր ծնողներին սոսկալի եղելությունը:

— Ի՞նչ է պատահել քեզ, մարդ, երեսիդ գույն չկա,— դիմավորեց նրան Շողիկը:

Սիմոնը ոչինչ չասաց, դեն ձգեց գլխից իր լայնեզր գլխարկը ու նստեց հնամաշ, կապերտով ծածկված թախտի վրա:
— Ի՞նչ է պատահել, ասելու՞ ես թե չէ,— համառեց Շողիկը:

— Մի բաժակ ջուր տուր ինձ,— արտասանեց Սիմոնը խեղդված ձայնով,— մի բաժակ ջուր:

Կուլ տալով մի քանի կում ջուր, Սիմոնը կարողացավ ուշքը փոքր ինչ ժողովել և տխուր եղելությունը պատմեց:

Շողիկը կատաղեց ու սկսեց հայհոյել տեսչին, վերականգուն, աշակերտներին և ամբողջ դպրոցը: Սուտ են ասում ամենքը, Վահանը ոչ ոքից և ոչինչ չի գողացել: Նրան ստիպել են, վախեցրել, և ինքն իրեն զրպատրել է: Վերջապես, եթե իսկապես նա մեկից կամ մյուսից գողացել է մի քանի կոպեկ, ի՞նչ մեծ հանցանք է: Երեխա է, չի հասկանում: Մի՞թե դրա համար կարելի է զրկել նրան ուսումից:

— Բավակա՛ն է, կին, բավակա՛ն է . գոչեց Սիմոնը, չկարողանալով այլևս լսել իր կողակցի բարբաջանքները: Կանչիր այստեղ անզգամին:

Վահանը խոհանոցումն էր: Շողիկը բռնեց նրա թևից ու ուժով տարավ Սիմոնի մոտ, ասելով.

— Շնորհակալ եմ, որդի, դու լավ վարձատրեցիր քո հորը:

Վահանը հասկացավ հոր կծու ծաղրը և հոգով ուրախացավ, որ այդպես հեշտ է ազատվում: Նա բոլորովին վշտացած չէր, որ իրեն արձակել են դպրոցից: Նա վաղուց էր սպասում այդ: Վաղուց էր ձաձրացել ու զզվել ուսումից: Նրա ուշն ու միտքն ուրիշ տեղ էր: Նա ուներ ավելի ուրախ շրջան, քան դպրոցական ընկերները:

Սիմոնը չգիտեր, որ ահա մի տարի է, ինչ որ իր որդին կրթվում է մի ուրիշ դպրոցում . . .

Խայտառակ եղելությունն այնքան էր ներգործել Սիմոնի վրա, որ ամբողջ մի շաբաթ նա գործի չգնաց: Բայց հարկավոր էր գնալ, և վերջապես, մի օր գնաց: Տպարանատիրոջ հարցերին նա պատասխանեց հակիրճ.

— Հիվանդ էի:

Ընկերները նկատեցին, որ մի շաբաթվա մեջ նա մի քանի տարով ծերացել էր: Նա ոչինչ չասաց: Նա չէր ուզում խոսել ոչ ոքի հետ: Գլուխը քաշ աշխատում էր, խույս տալով ընկերների հայացքից անգամ: Բնազդմամբ զգում էր, որ արդեն

ամեն բան հայտնի է նրանց: Եվ չէր սխալվում:

Ամբողջ օրը Սիմոնը և Վահանը իրարու չէին հանդիպում ու չէին ուզում հանդիպել: Առավոտները Սիմոնն աշխատում էր տնից ավելի վաղ դուրս գալ, քան Վահանը կզարթներ: Ճաշի միջոցին նույնպես չէինք հանդիպում: Շողիկը Վահանին կերակրում էր մյուս սենյակում կամ խոհանոցում, վախենալով Սիմոնի տարօրինակ մռայլ տրամադրությունից: Երեկոները Վահանը տուն է գալիս այն ժամանակ, երբ Սիմոնը քնած էր կամ ձևացնում էր, թե քնած է:

Գրեթե ամեն օր Վահանն իր մորը տալիս էր որոշ գումար: Թե ինչպես և որտեղից էր վաստակում այդ փողերը՝ չէր ասում: Շողիկը մի քանի անգամ հետաքրքրվեց իմանալ և, որոշ պատասխան չստանալով, լռեց:

Վահանն ասել էր.

— Եթե հայրիկին հայտնես, որ ես քեզ փող եմ տալիս, էլ մի կոպեկ չեմ տա:

Եվ Շողիկը չէր հայտնում:

Մի օր Վահանը տուն եկավ ծեծված ու ջարդված, դեմքն արյունաշաղախ: Մոր համառ հարցերին նա, տատանվելով ու կակազելով պատասխանեց թե, տրամվայից է ընկել: Եվ երեք օր տանը մնաց պառկած: Տպարանում Սիմոնի ընկերներից մեկն ասաց նրան, որ ինքն ասել է, թե ինչպես ամբոխը հարձակվել ու ծեծել է Վահանին:

Բայց ինչու՝ չասաց: Մի ուրիշ օր Վահանը տուն եկավ արբած և, գրպանից դուրս բերելով մի քանի հարյուրանոց թղթադրամներ, շպրտեց մորը .

Վերցրու, ասաց նա, այսօր գործերս լավ են գնացել և հաղթությունս տոնել եմ:

Շողիկի աչքերն ազահությունից պսպղացին: Նա չհարցրեց անգամ, թե այդ ինչ գործեր են:

Ամիսներ անցան Սիմոնը տակավին լուռ էր ու մռայլ: Բայց նրա անհանգիստ ուղեղը գործում էր գիշեր ցերեկ: Հազար ու մեկ մտքեր, միմյանցից սոսկալի, գալիս ու անցնում էին նրա գլխով, և նա ավելի էր խորասուզվում իր մեջ: Նա զգում էր, թե Վահանն ինչով է զբաղված այժմ: Նա սարսափում էր իր ենթադրաթյունից: Զգում էր, որ պատրաստվում է մի փոթորիկ, որ այսօր վաղը պայթելու է և կործանելու իրեն և իր որդուն: Նա աղերսում էր աստծուն հեռացնել այդ փոթորիկն իր գլխից և բավականանալ նրա սոսկալի տանջանքներով:

Բայց ճակատագիրն ավելի զորավոր էր, քան նրա լուռ աղերսանքները . . .

Գիշեր էր: Որ ժամը՝ Սիմոնը չգիտեր: Զգում էր, որ ուշ է: Նա պառկած էր երկու փոքրիկ սենյակներից մեկում, առանձին: Տրորվում էր անկողնու
մեջ և քունը չէր գալիս հանգստություն տալու նրա տկար մարմնին ու հոգնած ներվերին: Գիտեր, որ Վահանը տանը չէ և մտածում էր նրա մասին: Մյուս սենյակից լսվում էր խորը քնած Շողիկի ու երեխաների շնչառությունը: Ուրիշ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ:

Հանկարծ հարևան սենյակի դռները կամացուկ բացվեցին: Սիմոնը զգաց, որ Վահանն է:

«Մայրիկ, մայրիկ» լսեց նա մի քանի անգամ որդու շշնջյունը: Հետո նա լսեց Շողիկի զարթնելը, որդու հետ շշնջայն ու ոտքի ելնելը: Լսեց, որ մայր ու որդի զգույշ քայլերով դուրս եկան սենյակից: Նա գտավ լուցկիների տուփը ու կամեցավ քովը դրած փոքրիկ լամպարը վառել, բայց մտածեց ու չվառեց: Նա կամացուկ վեր կացավ և խարխափելով անցավ մյուս սենյակ, այնտեղից անցավ նախասենյակ, որից դենը խոհանոցն էր: Նա կանգ առավ մթության մեջ: Խոհանոցի դռները գոց էին, բայց այնտեղ լույս կար: Սիմոնը մոտեցավ դռներին, զգուշությամբ նրանց մի փոքր բաժանեց իրարուց ու տեսավ հետևյալ պատկերը: Մայր ու որդի կանգնած էին դեմ դիմաց, երկուսն էլ տարօրինակ հուզված, երկուսն էլ գունատ: Վահանը դուրս բերեց պիջակի գրպանից թղթադրամների մի մեծ կապոց և տալով մորը, շշնջաց.

— Դու այս փողերը թաքցրու մի ապահով տեղ, մնացյալը ոչինչ: Ինձ բռնելը շատ էլ հեշտ չէ:

— Բայց գողությունը լավ բան չէ,— լսվեց Շողիկի ձայնը:

Միևնույն ժամանակ Սիմոնը նկատեց, թե ինչպես Շողիկի աչքերը փայլեցին թղթադրամների կապոցը տեսնելիս և ինչպես նա դողդոջուն ձեռքով վերցրեց կապոցը:

— Գողությունը լավ բան չէ, բայց հինգ հազար ռուբլին լավ բան է: Թող հայրս ինչքան ուզում է իր ազնվությունը քարոզե, իսկ ես չեմ ուզում, որ դու կիսաքաղցած ապրես: Թաքցրու:

Շողիկն այլևս ոչինչ չասաց: Նայեց աջ ու ձախ: Սիմոնը զգաց, որ նա փողերը թաքցնելու համար ապահով տեղ է փնտրում: Տեսարանն այնքան զազրելի էր նրա համար, որ մի վայրկյան կամեցավ հեռանալ, որ չտեսնե: Բայց ինչպես թողնել, որ մայր ու որդի անպատիժ ոտնատակ անեն ցեխի մեջ մնացորդը նրա պատվի:

Սիմոնը բաց արավ դռներն ու մտավ խոհանոց:

Շողիկը բարձրաձայն ճչաց: Վահանը մի վայրկյան ցնցվեց՝ անտեսելով հոր կիսամերկ, նիհար ու բարձր կերպարանքը լամպի աղոտ լույսի ներքո: Բայց իսկույն ևեթ կարողացավ ուշքը ժողովել իր տարիքին ոչ հատուկ կամքի ուժով:
— Ավազակներ, այդ ինչ եք անում այստեղ,— գոռաց Սիմոնը, բռունցքները սեղմելով,— ես ձեր գլուխը կջարդեմ:

— Չես կարող,— արտասանեց Վահանը:

Սիմոնը նկատեց, որ նա մի ձեռը տարավ գրպանը: Որդու այդ սպառնալի շարժումը սպառեց Սիմոնի համբերության վերջին կաթիլը: Նրա ուղեղը պղտորեց: Նայեց արյունալի աչքերով աջ ու ձախ: Պատի դարակներից մեկի վրա դրած էր մի աղյուս, որ Շողիկը գործ էր ածում դանակները ժանգից մաքրելու համար: Մի ակնթարթում Սիմոնը վերցրեց աղյուսը ու ուժգին թափով ձգեց Վահանի վրա: Հարվածը հասավ ուղիղ Վահանի ճակատին: Եվ նա մի

խուլ ճիչ արձակելով փռվեց գետնի վրա: Որդու արյունը շառագեց մոր աչքերը:

— Այդ ի՞նչ արիր, գազան,— գոչեց Շողիկն ու ընկավ որդու վրա:

— Արի, ինչ որ պարտավոր էի անել: Այժմ թող ինձ դատեն աստված և մարդիկ:

Եվ անմիջապես հագնվելով, վերցրեց Վահանի գողացած փողերը և գնաց ոստիկանատուն անձնատուր լինելու իբրև որդեսպան: